

կի թափօրն է. իսկ Էլիան ժանտախտի Պալիս աստուածուհի Տու ամուսինն է:

Հնգկատան նոր դնացած մի քանի եւրոպացիներ հաւատ չէին ընծայում այն բանին, թէ իսկապէս տեղացի քրմերը, ինչպէս հաւատացնում էին նրանց, կարողանում են կրակի միջից անվնաս անցնել: Ախրաւորուած ծանօթ հնդիկներին մէկը խոստանում է փորձով ապացուցանել այդ:

Ներկայիս պատմում է թղթակիցը, մենք հատուցեցինք մեր ծանօթ հնդիկի պարտեզը: Դաստակերտի առաջ լայնածաւալ մարգագետնի վերայ մի մեծ փոս էր փորուած, որի լայնութիւնը 4, իսկ երկարութիւնը 20 ոտնաչափ էր և ամբողջապէս լիքն էր ահագին խանձողներով: Փայտերը, ինչպէս մենք ամէնքս համոզուեցինք, բոլորովին չոր էին: Բացի դրանից մեր ներկայութեամբ, եղած կրակի վերայ մի հաստ շերտ էլ ածուխ տարածեցին: Այնպէս որ տաքութիւնը 10 ոտնաչափ հեռաւորութիւնից զգացւում էր: Հանդիսատեսն հընդիկների հետ ի միասին այդտեղ էր գտնուում և մեր, եւրոպացիներին, փոքրիկ խումբը. ի միջի այլոց կային քիմիայի ուսուցչապետ Բիշարդսոնը, գոկտոր Նիալէյը և ֆրանսիացի բժշկապետ Պասկալը: Ժամի 7-ին մենք տեսա՛յք մօտեցող թափօրը: Առաջից գալիս էր մեծ քրմայետը, սուրը ձեռքին. նրան հետեւում էին երկու ուրիշ քրմեր, իսկ զրանցից յետոյ բերում էին մի փոքրիկ ապակէ. քանդակներով զարդարուած, պահարան: Որի մէջ մի կուռքի պատկեր կար դրուած: Ծերունի քրմայետը ներկայ դնուողներին յայտարարեց, որ առաջ իւր երկու ընկեր քրմերը պիտի մանեն կրակը, իսկ յետոյ բոլոր հաւատացեալները, բացի կանանցից, և ապա փտահացրեց, որ նրանք բոլորն էլ անվնաս կմնան: Եւ վերջապէս սկսուեցաւ այդ անհատաւոր տեսարանը: Հենց այն ժողովին երբ ձերուի քրմայետը երգմանցնում և նղովք էր թափում երկու քրմերը սկսեցին մարմնի օտարտա շարժումներ անել: Կրակը ձգեցին մի քանի կոկոսի ընկոյզ և այդ երկու քրմերը, բարձրաձայն աղաղակելով՝ կրակը թռան: Մի քանի անգամ նրանք յետ ու առաջ դնացին, եկան բողբոջա կրակի միջից: Բոցը պատել էր նրանց անդամները, իսկ նրանք ոտներով սլաք ու այն կողմն էին ձգում ածուխները, որոնցից դուրս եկած կայծերը թռչկոտում էին ամեն կողմ: Ամբողջ թէ մարդ և թէ կին, երգում ու սուր ձայնով ծնում էր, իսկ քրմայետը իր երգումըն ու նղովքն էր շարունակում: Յետոյ ամբողջի միջից սկսեցին բաժանուել մի քանի տղամարդիկ: Նրանք աներկիւղ առաջ անցան ու կրակը թռան: Նրանց հետեւեցին ուրիշները: մինչև անգամ չորս տարեկան երեխաները ուրախ ուրախ վազում անցնում էին կրակի միջից: Փոսից այնպիսի տաքութեամբ

թխւում էր, որ մենք մեր տեղերում նեղուէինք: Այդ ժամանակ մեր խմբից էլ մի պարուն սիրտ առաւ ու կրակը մտաւ: Մենք տեսա՛յք, ինչպէս նա զանգաղ քայլերով անցնում էր կրակի միջից: Նա յետոյ մեզ պատմեց, որ իրեն այնպէս էր թուում, թէ անց էր կենում տաքացած աւազի վրայից:

Ներկայ եղող եւրոպացիներին մէկը կասկած յայտնեց, որ դուք է նրանց ոտների տակին ուրիշ բան կայ կացրած և այդ բոլորը կեղծիք է: Բայց բժշկապետ Պասկալը քննութիւնից երևեցաւ, որ նրանց ոտների կաշին բնական էր և որ զարմանալին էր՝ նրանց վերայ այրուածքներ չկային:

Քրմերը կէս ժամի չափ մնացին կրակի մէջը: Պարտեզից հեռանալով, նրանք պատուիրեցին, որ ոչ ոք այլ ևս չմտնի կրակը, եւ ժողովուրդը շուտով ցրուեցաւ:

Աւսուցչապետ Բիշարդսոնը, մի քանի ուրիշ տղամարդիկ և ես մտնեցանք կրակի փոսին: Բայց տաքութիւնն այնքան սաստիկ էր, որ մենք սափաւեցանք յետ քաշուելու: և համոզուեցանք, թէ այնտեղ մեր տեսածը կրակ էր և ոչ ուրիշ բան: Մեղից ոչ ոք չկարողացաւ բացատրել իր տեսած հրաշալիքը: Մնում է միայն ընդունել, որ հնդիկներին բնութեան ոյժերից շատերն են յայտնի: մինչ մեզ եւրոպացիներին համար դեռ դաղտնիք են:

ՍՏԱՆՈՒՄԺ ԳՐԱԷՐ

Դիդար Ապարին, ծագում և կենսապատմութիւն. — գրեց ընտանեաց ըտերեւում մը. Վենետիկ, 1898:

Մկրտիչ Նաղաշ և իւր տողերը. յաւերած՝ Միջնադարեան տաղեր զարկալութեան վերայ. — Կ. Կասառնեանց, Վաղարշապատ, 1898:

Եղեղի Մկրտչեանց տունը (Աղբիւր — Տարաղի հրատարակութիւն № 53). — Պերճ պոօշեանց, Թիֆլիս, 1899:

Տառապնախնելի ծառայ Ռոխը և Կորած Բարեկամը. — Է. Գօրբունով — Պոստալով. Ռուսիայի Լենդաու. — Թարգմ. Գ. Ա. Վաղարշապատ, 1899:

Բաշան (պատկեր) արտադրած Մշակ լրագրից հրատ. Ա. Ը. — Ա. Ահարոնեանց, Թիֆլիս, 1899:

Ինչպէս լրագիրներից տեղեկանում ենք, բոլոր է տեսել նաև մի կարևոր աշխատութիւն՝ Յովհաննէս արքեպիսկոպոս Հաջխաթունեանի կենսապատմութիւնը, որն հեղինակն է Մայր Աթոռոյ տաղապոյն անդամներից մէկը՝ Գեորգ Երևաստեան: